

ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՉԱՐԳԱՅՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Հ.Հ.ՍԱՐՅԱՆ, Ա.Ս.ՄԱԿԱՐՅԱՆ

Անցումային տնտեսությունը վարչահրամայական համակարգից շուկայականին անցնելու աննախադեպ դործընթաց է: Այն իր բնույթով տնտեսության էվոլյուցիոն որոշակի կարգավիճակ է, երբ զարգացման մի աստիճանից անցում է կատարվում մյուսին:

Ցանկացած անցումային տնտեսություն ունի իր առանձնահատկությունները, որոնք բնորոշվում են տվյալ երկրի և ժամանակաշրջանի սոցիալական գործոններով և, իհարկե, տնտեսական կյանքի առանձնահատկություններով: Հայաստանի անցումային տնտեսության առանձնահատկություններից է այն, որ աննախադեպ, ոչ ավանդական բնույթ է կրում անցումը՝ պլանայինից շուկայական տնտեսության, և Հայաստանը, բնականաբար, տնտեսական դժվար և բարդ իրավիճակում է գտնվում, քանի որ վերջին տարիներին է անկախություն ձեռք բերել: Այնուհետև, Հայաստանի տնտեսությունը, ինչպես և նախկին միութենական մյուս հանրապետությունները, զարգանում էր վարչահրամայական կառավարման մեթոդների կիրառմամբ: Այդ պատճառով էլ հարկավոր է ձևավորել նոր, արդյունավետ տնտեսական քաղաքականություն: Սակայն մեր հանրապետությունում անցումային հիմնահարցերի լուծման համար չի կարելի հենվել որևէ փորձարկված կամ արդեն օգտագործված մոդելի վրա:

Հայաստանում շուկային անցման գլխավոր խնդիրները դարձան.

- պետական ձեռնարկությունների ապապետականացումը և սեփականաշնորհումը,

- շուկայական ենթակառուցվածքների և տնտեսական նոր կապերի ու համապատասխան մեխանիզմների ձևավորումը,

- տնտեսության ապաքենաշնորհումը՝ որպես մրցակցության զարգացման ու շուկայական հավասարակշռվածության հասնելու կարևոր նախապայման,

- գների ազատականացումը, պահանջարկին ու առաջարկին համապատասխան գների ձևավորումը,

- դրամավարկային կոշտ քաղաքականության իրականացման միջոցով երկրի ֆինանսատնտեսական կայունացումը,

- սոցիալական պաշտպանվածության համակարգի ստեղծումը, որը կարող է թեթևացնել շուկայական տնտեսության պայմաններին բնակչության մի մասի հարմարեցման հոգար,

- ակտիվ կառուցվածքաինվեստիցիոն քաղաքականության իրականացմամբ տնտեսության սոցիալական կողմնորոշվածության ուժեղացումը, որի շնորհիվ պետք է զարգանան սպառողական ապրանքների և ծառայությունների արտադրությունը, ինչպես նաև բարձրանա արտադրության ճկունության ընկալունակությունը տեխնոլոգիական նորամուծությունների նկատմամբ:

Ըստ էության, անցումային տնտեսությունը իրականացվում է երկու փուլով: Առաջինը հակաինֆլացիոն քաղաքականության և կազմակեր-

պակառուցվածքային խորը բարեփոխումների իրականացումն է: Այս փուլը, որ Հայաստանում պետք է տևեր 2 - 3 տարի, բայց շարունակվում է մինչև այժմ, սկսվեց փաստորեն 1994թ.՝ ոռոգելու գոտուց դուրս գալու ժամանակ: Երկրորդ փուլում, որն ըստ էության պետք է տևի 10 - 15 տարի, նախատեսվում է տնտեսությունում իրականացնել հիմնարար վերափոխումներ և ապահովել տնտեսական աճ:

Տնտեսագետների մեծ մասի կարծիքով, մեր տնտեսությունն այսօր գտնվում է յուրահատուկ իրավիճակում, ավելին, մենք դեռ երկար ճանապարհ ունենք անցնելու զարգացած շուկայական համակարգին հասնելու համար: Անցումը շուկային հաջողությամբ կատարելու համար հարկավոր է լուծել երկու խումբ փոխկապակցված խնդիրներ: Առաջին խմբում համեմատաբար պարզ և հեշտ լուծելի խնդիրներ են: Դրանք կապված են հավասարակշռված տնտեսության ձևավորման հետ: Եվ այստեղ Հայաստանն ունի որոշակի հաջողություններ: Սպառողական շուկան արդեն հազեցած է բազմաթիվ ապրանքներով և ծառայություններով: Նույնիսկ ապրանքների ու ծառայությունների պահանջարկի նկատմամբ մարդկանց հնարավորություններն ընդլայնվում են: Սկսվում է աշխատուժի, արժեթղթերի, անշարժ գույքի շուկաների զարգացումը: Չնայած որ Հայաստանը միութենական մյուս հանրապետություններից առաջինն էր, որ իրականացրեց հողի սեփականաշնորհում, սակայն հողի շուկա դեռ գոյություն չունի, հետևաբար, դա պատճառ է դառնում անշարժ գույքի շուկայի անկատար լինելուն: Զարգացած չէ նաև ֆինանսական շուկան:

Երկրորդ խմբում ավելի բարդ և դժվար լուծելի խնդիրներ են: Այստեղ հստակ երևում է տարբերությունը անցումային տնտեսության և զարգացած շուկայական տնտեսությունների միջև: Խնդիրները վերաբերում են ապրանքների արտադրությանը, տեխնոլոգիական առաջընթացներին, արդյունավետության աճին, ծախսերի իջեցմանը, արտադրանքի թարմացմանը և այլ հարցերի, այսինքն՝ տնտեսության աճին, որը Հայաստանի համար ավելի դժվար իրագործելի է, քան մյուս հանրապետությունների:

ՀՀ-ում գործում են երկու ֆոնդային բորսաներ՝ Երևանի ֆոնդային բորսան (ԵՖԲ), և Գյումրիի ֆոնդային բորսան (ԳՖԲ): ԵՖԲ-ն ստեղծվել է 1993թ., որպես բաց բաժնետիրական ընկերություն՝ 7500 ԱՄՆ դոլար նախնական կապիտալով և 25 բաժնետեր անդամներով: Ներկայումս այն ունի 108 բաժնետեր անդամներ, կան մոտ 60 ձեռնարկությունների բաժնետոմսեր: 1997թ. ԵՖԲ-ում իրականացվել են մոտավորապես 2,8 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումարի գործարքներ: ԳՖԲ-ն ստեղծվել է 1995թ.: Անցած 3 - 4 տարիներին ՀՀ-ում գործող այդ երկու ֆոնդային բորսաների գործունեության դիտարկումը ցույց է տալիս, որ բորսան դեռևս ՀՀ-ում ֆինանսական շուկան ձևավորող ակտիվ գործոն չէ: Ֆոնդային բորսաների չրջանակներում գործող բրոքերային գրասենյակները իրականացնում են ակտիվ միջնորդային, նաև խորհրդատվական գործունեություն, այն է՝ ներդրողներին խորհուրդներ են տալիս որևէ ձեռնարկության բաժնետոմսերը ձեռք բերելու, դրանց գնի և այլնի վերաբերյալ:

ՀՀ-ում գործում է արժեթղթերի որոշակի շուկայական դաշտ, որը բնութագրվում է առավելապես հանրապետության չորս խոշոր բաժնետիրական բանկերի (Հայէկոնոմբանկ, Հայագրոբանկ, Արդշինբանկ, Իմպեքսբանկ) կողմից՝ 605.400 հասարակ և արտոնյալ անվանական բաժնետոմսերի թողարկմամբ, որոնց գումարային անվանական արժեքը կազմում է 1,149մլն

դրամ: ՀՀ-ում բոլոր բանկերի հանրագումարային կապիտալը կազմում է ընդամենը 17 մլրդ դրամ. կամ մոտավորապես 3,4մլն ԱՄՆ դոլար, որը մեծ թիվ չէ: ՀՀ-ում ձևավորվում է ֆինանսական շուկայի խառը մոդել, որտեղ առևտրային բանկերի և ոչ բանկային ու ներդրումային կազմակերպությունների իրավունքները հավասար են:

Ինչո՞ւ ՀՀ-ում չի ձևավորվում արժեթղթերի իրական շուկա: Նախ, դեռևս չի վերագործարկվել արդյունաբերությունը, և անհրաժեշտ է վարել հստակ արդյունաբերական քաղաքականություն, մյուս կողմից, 1994 - 1995թթ. ՀՀ-ում բազմաթիվ բանկեր և ֆինանսավարկային կազմակերպություններ, ավանդների տեսքով ներգրավելով տասնյակ հազարավոր քաղաքացիների գումարներ, այնուհետև փլուզվեցին և ի վիճակի չեղան վերադարձնել քաղաքացիների ոչ միայն տոկոսները, այլև մայր գումարները: Բարձր դիվիդենտ կամ շահույթ վճարելը պայմանավորվում էր սղաճի մակարդակով, սակայն, երբ սղաճի մակարդակը սահմանափակվեց, 1994թ. սկզբից սկսվեց այդ կազմակերպությունների փլուզումը: Դրա հետևանքով ձևավորվեց ՀՀ տասնյակ հազարավոր քաղաքացիների՝ «խաբված ավանդատուներին» բանակը: ՀՀ կենտրոնական բանկը այդ գործընթացը մեկնաբանեց որպես քաղաքացիների կողմից թույլ տրված սխալ, որոնք այդ «բանկերին» վստահել են իրենց գումարները: Իսկ մյուս կողմից էլ նշվում էր, որ ֆինանսավարկային կազմակերպություններն իրավունք չունեին ավանդներ ընդունելու, քանի որ գրանցված բանկեր չէին, այլ գրավատներ և այլ ֆինանսավարկային կազմակերպություններ: Այսպիսով, պետությունը ոչ մի պատասխանատվություն չի կրում. «խաբված ավանդատուների» պարտքը թեկուզ և մասամբ մարելու համար: Բայց, այնուամենայնիվ, պետությունը և կենտրոնական բանկը պարտավոր են կրել որոշակի պատասխանատվություն, քանզի՝

1. Այդ բանկերը, բնակչությանից ավանդները ներգրավում էին անօրինական ձևով, սակայն պետական վերահսկողությամբ:

2. Չէ՞ որ այդ ֆինանսավարկային կազմակերպությունների «անօրինական» գործունեությունից պետությունը հարկեր է դանձել, և եթե հաշվարկենք դրանց չափը, այն կհասնի մի քանի տասնյակ մլն ԱՄՆ դոլարի: Հարյուր հազարավոր մարդիկ չեն մոռացել նաև նախկին ԽՍՀՄ-ի իրենց ավանդների անակնկալ արժեզրկումը, որը 1990թ. դրությամբ կազմում էր մոտ 9 մլրդ խորհրդային ռուբլի: Այս ամենը անվստահություն է առաջացնում ոչ միայն պետական կառույցների, այլև մասնավոր գործարարության նկատմամբ: Տվյալ դեպքում բնակչության մեծ մասը համոզված չէ ձեռնարկությունների բաժնետոմսերի, արժեթղթերի կամ պետական արժեթղթերի մեջ ներդրումներ կատարելու հույսով: Այդ բոլորից հետո նրա համար ռիսկի աստիճանը մեծ է: Սա է ՀՀ արժեթղթերի շուկայում ներքին ներդրումների խոչորածավալ հոսքը արգելակող պատճառներից մեկը: ՀՀ կառավարությունը և ԱԺ-ն անհապաղ պետք է որոշում ընդունեն նախկին ԽՍՀՄ-ի ավանդների վերաբերյալ՝ հետևյալ մոտեցմամբ.

1. ՀՀ կառավարությունը պետք է ընդունի իր պարտավորությունը:

2. Պարտքի չափը ամրացվում և ընդունվում է՝ 1990թ. 1 ԱՄՆ դոլ. = 10 խորհրդային ռուբլի կուրսով, ուստի և ընդհանուր պարտքը կկազմի մոտավորապես 900 մլն ԱՄՆ դոլար:

3. Այդ գումարը փոխհատուցելու համար հարկավոր է մշակել միջոցառումներ՝ ըստ հասակային խմբերի և գումարների չափերի: Ասենք,

առաջին հերթին փոխհատուցվեն 70 տարեկանից ավելի տարիք ունեցող այն քաղաքացիները, որոնց գումարները չէին անցնում 10.000 խորհրդային ռուբլուց:

4. Պետք է միջոցներ հայթայթել ավանդների ընդհանրական փոխհատուցման համար:

ՀՀ ֆինանսական շուկայում պետությունը հանդես է գալիս որպես արժեթղթերի խոշոր թողարկող, որի հաշվին ֆինանսավորվում է պետական բյուջեի սղաճը: Օրինակ, 1998թ. պետական բյուջեի եկամտային մասը կազմում էր 160.78 մլրդ դրամ, իսկ ծախսային մասը՝ 211.7 մլրդ դրամ, սղաճը՝ 50.9 մլրդ դրամ: Վերջինիս ֆինանսավորման աղբյուր են ծառայում ներքին և արտաքին աղբյուրները: Որպես ներքին աղբյուրներ կարելի է նշել՝

ա) պետական արժեթղթերը՝ մոտավորապես 6,7 մլրդ դրամ արժույթով:

բ) պետական ձեռնարկությունների մասնավորեցումից ստացված 2,2 մլրդ դրամը:

Փաստորեն, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորվող բյուջեի սղաճի 8,9 մլրդ դրամից 6,7 մլրդ դրամը ապահովվում է պետական արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման միջոցով: Նշենք նաև, որ ՀՀ պետական բյուջեի մոտավորապես 50 մլրդ դրամ դեֆիցիտի 80 %-ից ավելին ֆինանսավորվում է արտաքին աղբյուրների հաշվին (օտարերկրյա վարկեր, շնորհներ և այլն), որովհետև ՀՀ-ին բնորոշ է տնտեսության ներքին խնայողությունների ցածր մակարդակը և արժեթղթերի բարձր իրացվելի շուկայի բացակայությունը:

ՀՀ-ում բացակայում են արժեթղթերի անկախ ռեսուրսները: Գործում է միայն կենտրոնացված ռեսուրսը, որը հիմնվել է ՀՀ էկոնոմիկայի և ֆինանսների նախարարության կողմից: Անհրաժեշտ է, որ ֆոնդային բորսաները ՀՀ-ում իրականացնեն ավանդապահային գործունեություն, քանի որ նույնիսկ վերջնահաշվարկի համակարգ չկա:

ПЕРЕХОДНАЯ ЭКОНОМИКА И ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ РЫНКА ЦЕННЫХ БУМАГ

А.А.САРЯН, А.С.МАКАРЯН

Резюме

Сегодня экономика РА находится в своеобразном переходном положении, и чтобы достичь уровня развитой рыночной системы, необходимо развить рынки рабочей силы, недвижимости, финансов, ценных бумаг и т.д.

Сейчас в РА действует определенное рыночное поле ценных бумаг, но реальный рынок ценных бумаг еще не сформировался, так как он не прозрачный и не внушает доверия гражданам.

Необходимо, чтобы фондовые биржи осуществляли бы накопительскую деятельность, так как на сегодня даже нет системы и методов окончательного расчета.

¹ ՀՀ հարկային տեղեկատու, Ե., 1998 (փետրվար):